կին գլխակորոյս փախուստը Կովկասից, որին ականատես եղել ենք արդէն մի անգամ: Այդ հնարաւորութիւնն է ահա, որ փչաքաղում է ամէնքիս: Ո՞վ կարող է ասել, թէ դա երբե՛ք, երբե՛ք կարելի բան չէ այլեւս: Եւ սակայն, նախատեսել պէտք է 1 առ հազար, անդամ տասը հազար հաւանականութիւնը եւս ու նը-ման դէպքի համար էլ դարման խորհիլ, քանի դեռ ուշ չէ: Ուստի եւ բնաւ ան տարբեր հարց չէ, թէ նման սոսկալի վայրկեանին մենք նորէ՞ն փախչող Ռուսաստանի փէչը բռնողն ու, հետեւաբար, մեր դրսի ու ներսի հարեւան-ների միջեւ բոլոր կամուրջները այրած թշնա-մի կո՞ղմ պիտի մնանք հրապարակում մեն-մի-նակ, թէ՞ առաջուց նրանց հետ հասկացողու-թեան եկած կողմ: Առաջին դէպքում՝ շատ-շատ Անդրկովկասի հայութեան բեկորները միայն ճողոպրիլ կարող են փախչող ռուսների հետ միասին, այն էլ՝ եթէ նրանք թոյլ տան այդ, մնացած հայութիւնը մոխիր պիտի ցանէ իր գլխին, եթէ միայն ողջ մնայ: Պէ՞տք է նա-խատեսնել նման հնարաւորութիւն, թէ՞ ոչ: Ինչո՞ւ հաշուի չառնել նաեւ այն, որ մեր հա-րեւանների հետ այս կամ այն ձեւով ընդհա-նուր լեզու չգտնելու պարագային՝ այսօրուան փոքրիկ Հայաստանն անգամ իրար մէջ բաժա-նելու չարաղէտ ծրագիրը յղանալ կարող են նրանք. չէ՞ որ դրա մասին մինչեւ իսկ Ռամ-կավար կեդրոնական օրգանը բաւական ժամա-նակ առաջ լուր էր հաղորդել: Ո՞վ պիտի մեզ օգնի նման պարագայի: Մոսկովում նստած ռո՞ւսը, Լոնդոնում բաղմած անգլիացի՞ն, թէ՞ մենք մեզի կը բաւենք՝ չորս ճակատների վը-րայ, տասնապատիկ գերազանց ուժերի դէմ կռուելու... մէկ մասով այստեղ նստած, այս հեռուները:

Բայց՝ համաթրքական ծրագրի դէմ հա-մարիական միութեան ծրագիրն էլ է պարզը-ւում: Ինչո՞ւ չէ, եթէ միայն իրագործելի է նա առհասարակ: Հայի բնական դաշնակիցն են համարւում պարսիկը եւ քիւրդը: Այդպէս ենք դատում եւ ուզում մենք, հայերս: Իսկ նը-րա՞նք: Նախ սխալ է թրքական ժողովուրդ-ներին հակադրել արիական ցեղերը, ինչպէս որ սխալ պիտի լինէր, օրինակ, մոնղոլական բոլոր ցեղերը հակադրել ռուսին: Մի դէպքում առնւում է որպէս կողմ մէկ լեզու եւ մէկ ծա-գում ունեցող, ցեղակից ժողովուրդներ, որոնք մէ՛կ ազգ դառնալու ճամբու վրայ են գտնը-ւում իսկ միւս դէպքում՝ տարբե՛ր լեզուներ խօսող եւ տարբե՛ր ծագում ունեցող ազգու-թիւններ: Հայը, քիւրդը եւ պարսիկը երբեւէ մէկ ազգ դառնալ չեն կարող, ոչ էլ ուզում են, իսկ տաճիկը եւ ազրին — դեռ հեռուն չեմ դը-նում — արդէն իսկ ինֆզինֆնին մէկ ազգ են համարում, ինչպէս, օր., մենք, արեւմտեան եւ արեւելեան հայերս: Ո՛չ միայն ուզում են նրանք այդ, այլ եւ՝ կամենում: Վաղը չէ միւս օրը՝ նոյն այդ գիտակցութիւնը պիտի իւրա-ցընէ անշուշտ նաեւ Ատրպատականի թուրքը, աւելի ուշ՝ թուրքեստանցին: Զմոռանանք եր-բեք այն փաստը, որ օսմանեան եւ կովկասեան թուրքի ազգային միութեան գաղափարը ըն-դամէնը 25–30 տարուան ջանքերի արդիւնք է:

Եւ յետոյ, կայ նաեւ շահերի, ուժերի խնդիր: Հայն ու քիւրդը հպատակ ժողովուրդ-ներ են, այն էլ տարբեր պետութիւնների հը-պատակ, իսկ պարսիկը՝ անկախ: Թուրքն ու պարսիկը շահագրգռուած են միասնաբար ճնշելու, օրինակ, քրդական շարժումը: Պար-սիկը հաշուի է առնում թուրքի ուժը եւ նրա-նից սպասուող վտանգը, իսկ մեր մէջ նա հաշ-ուի առնելիք բան չի տեսնում: Շատ շատ՝ օգ-տուել միայն կարող է մեր թոյլ ուժերից: Ա-ւելին դեռ. հակառակ մեր կատարեալ լոյ-լութեան, Սալմասը եւ Խոյը մնում են գրե-թէ հայաթափուր, անշուշտ՝ թրքական պա-հանջների հետեւանքով: Դեռ որոշ պարսիկներ մինչեւ իսկ ծրագիր են որոճում՝ հայկական գպրոցները փակելու: Ահա իրականութիւնը: Ցանկութիւնները մէկ, բայց անողոք փաստե-րը՝ երկու: Մ՝Ն յուսահեղի չէ մեզ համար, ի հարկէ, երբ այս կամ այն պարսիկ հրապա-րակագիրը թէկուզ շատ կծու լեզու է բանեցը-նում համաթրքական ծրագիրների դէմ: Իսկ պատահե՞լ է, որ անդամ նման բացառիկ գոր-ծիչները հայն ու Հայաստանը կողմ հաշուեն, ինքնուրոյն միաւոր:

Այս չի նշանակում հարկաւ, թէ հայ ազ-գային քաղաքականութիւնը՝ անուշադիր պի-տի թողնէ հայ-պարսկական բարեկամութեան խնդիրը: Երբե՛ք: Սկսուած աշխատանքը այդ